ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2025 թվականի N 1979 - Ն

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԹԵԹԸ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԴՐԱՆՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱՎՃԱՐՈՎ) ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակներում առողջության ապահովագրական փաթեթը, դրա ձևավորումը, փոփոխություններ և լրացումներ իրականացնելու կարգը, դրանում ընդգրկված հատուցման ենթակա (այդ թվում՝ համավճարով) բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ցանկերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) պաշտոնական վիճակագրությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակչության համար հիվանդությունների, մահացության կամ հաշմանդամության հիմնական պատճառ հանդիսացող հիվանդությունների և վիճակների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) պաշտոնական վիճակագրությամբ Հայաստանի Հանրապետությունում բնակչության համար հիվանդությունների, մահացության կամ հաշմանդամության հիմնական պատճառ հանդիսացող քրոնիկ հիվանդությունների և վիճակների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) ապահովագրական փաթեթի շրջանակներում մարզային բժշկական կազմակերպություններից Երևանի կամ մարզային այլ նեղ մասնագիտական ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններ տեղափոխման ենթակա հիվանդությունների և վիճակների ցանկը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ապահովագրական փաթեթի շրջանակներում կանխարգելիչ հետազոտությունների ցանկը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) ապահովագրական փաթեթի շրջանակներում փոխհատուցվող ախտորոշիչ հետազոտությունների ցանկը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) ապահովագրական փաթեթի շրջանակներում առողջության առաջնային պահպանման ծառայություն իրականացնողին ուղղորդվող շտապ օգնության կանչերի ցանկը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) արտահիվանդանոցային պայմաններում բուժման ենթակա ախտորոշումների և ախտաբանական վիճակների հիվանդանոցային բուժման դեպքում ուղեգրման ցուցումների ցանկը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) ապահովագրական փաթեթում ներառված արտահիվանդանոցային և հիվանդանոցային ծառայությունների նկարագրերը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) այն ծառայությունների կամ մեթոդների ցանկը, որոնք ունեն սահմանափակ հասանելիություն՝ համաձայն N 10 հավելվածի.

11) շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ցանկը՝ համաձայն N 11 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ